



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՊՐԱՄՅԱՆ/ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍ**

<<29>> հունվար 2020թվական

ԹԻՎ 01

**ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ախվերդյան Օնիկ
2. Ավետիսյան Աղվան
3. Գալստյան Տիգրան
4. Կարապետյան Լևոն
5. Կարապետյան Հայկ
6. Հարությունյան Դավիթ
7. Հովսեփյան Ռշտունի
8. Սմոյան Սմո
9. Քամայան Էդգար

	Կողմ՝Ց	դեմ՝Օ	ծեռնպահ՝Օ
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հունվարի «29»
Բաղրամյան (Վաղ.) համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆՆԵՐԻ
ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ (ԿԱՂ.) ՀԱՄԱՅՆՔԻ
ԱԿԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՄԱՐԻ 29-Ի
ԹԻՎ 01 ՆԻՍԻ


ՕՐԱԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ /ԿԱՂ./
ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ /ԿԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԻՐԶՈՅԱՆ /
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ /ԿԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԻՐԶՈՅԱՆ /
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ /ԿԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԻՐԶՈՅԱՆ /
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ /ԿԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԻՐԶՈՅԱՆ /
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԴՐԱՄՅԱՆ (ԿԱՂ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԻՐԶՈՅԱՆ /

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ/ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

<<29>> հունվար 2020թվական

թիվ 01

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ /ՎԱՂ./
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքի ավագանու 2020 թվականի հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ 9	դեմ՝0	ծեռնապահ՝0
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հունվարի «29»
Բաղրամյան (Վաղ.) համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՈՒ ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2020թվականի հունվարի 29-ին
2. 2020 թվականի մարտի 04-ին
3. 2020թվականի ապրիլ 14-ին
4. 2020թվականի մայիս 25-ին
5. 2020թվականի հուլիսի 06-ին
6. 2020թվականի օգոստոսի 27-ին
7. 2020թվականի հոկտեմբերի 12 –ին
8. 2020թվականի դեկտեմբերի 07-ին

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

<<29>> հունվար 2020թվական

ԹԻՎ 02

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ /ՎԱՂ./
ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	կողմ՝9	դեմ՝0	ծեռնպահ՝0
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հունվարի «29»
Բաղրամյան (Վաղ.) համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՈՎԱՅԱՆԻ /ԿԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2019 թվականի վարչական բյուջեով պլանավորված եկամուտները կազմում են

- Ընդամենը՝ 66377500 դրամ
- Հողի հարկ 3300000 դրամ
- Գույքահարկ 8900000 դրամ
- Վարձակալական հողի հարկ 270900 դրամ
- Տեղական տուրք 550500 դրամ
- Տեղական վճար 1867100 դրամ
- Դոտացիա 49489000 դրամ
- Համ. վարչ. տար. .ինքն. կառ. շենք-շին. օրին. Վճար 2000000 դրամ

2019 թվականի ընթացքում կատարվել է եկամուտների հավաքագրում

- ընդամենը 33310600 դր, որից
- հողի հարկ 3355200 դրամ
- գույքահարկ 11104800 դրամ
- վարձակալական հողի հարկ 269600 դրամ
- տեղական վճարներ 1757800 դրամ
- դոտացիա 49489000 դրամ
- տեղական տուրքեր 721500 դրամ
- համ. վարչ. տար. .ինքն. կառ. շենք-շին. օրին. վճար 2103400

Վարչական բյուջեյի 2019 թվականի կատարված ծախսերը

- Ընդամենը՝ 42755000 դրամ
- Աշխատավարձ և հավելավճարներ 28505500 դրամ
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 9749500 դրամ
- Սուբսիդիա Բաղրամյանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ին՝ 2000000 դրամ
- Սոց. Օգնություն 2500000 դրամ

Ֆոնդային բյուջեյի 2019 թվականի եկամուտները

- Ընդամենը՝ 40871600 դրամ
- Համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից մուտքեր՝ 167200 դրամ
- Համայնքի վարչական բյուջեից / պահուստային ֆոնդից/ կատարվող հատկացումներ 14500000 դրամ
- Պետ. Բյ. Կապ. Ծախսերի ֆին. Նպատակային հատկացումներ(սուբվենցիաներ)՝ 13900000 դրամ
- Տարեսկզբի ազատ մնացորդ՝ 12304400 դրամ

2019թ. Ֆոնդային բյուջեի ծախսերը

- Ընդամենը՝ 36724500 դրամ
- Սարքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր 3271600 դրամ
- Կապիտալ շինարարության և նորոգումների ծախսեր 33452900 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

«29» հունվարի 2020թվական

N 03

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ /ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
2020ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍՆԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, <<Թափոնների մասին>> օրենքի՝ 10 և 11, և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-ից 13-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքի **2020 թվականի** սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ախվերդյան Օնիկ
2. Ավետիսյան Աղվան
3. Գալստյան Տիգրան
4. Կարապետյան Լևոն
5. Կարապետյան Հայկ
6. Հարությունյան Դավիթ
7. Հովսեփյան Ռշտունի
8. Սմոյան Սմո
9. Քամայան Էդգար

	կողմ՝9	դեմ՝0	ծեռնպահ՝0
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հունվարի «29»
Բաղրամյան (Վաղ.) համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան/Վաղ./ համայնքի ավագանու
2020 թվականի հունվարի 29-ի N 03 որոշման



ՄԽԵՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱԳՐԱՄՅԱՆ/ՎԱԳ./ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔԻՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքում առկա է 644 տնտեսություն, բնակչության թիվը՝ 3027, աղբահանվող փողոցների թիվը՝ 27, երկարությունը՝ 16 կմ:
2. Համայնքում առաջացող կենցաղային աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով կազմում է տարեկան 500 խմ:
3. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 105 հա: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացնում են համայնքի ամբողջ տարածքում՝ ամսական 4 անգամ՝ Ա/Ձ Լևոն Օհանյանի կողմից 2019 թվականի փետրվարի 01-ին կնքված ԱՄԲՀ-ԳՀԾՁԲ 19/1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն:
4. Աղբահանության համար վարձավճարների դրույքաչափը հաստատվել է համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 11 նիստի N 33-Ն որոշմամբ:
- 1) Համայնքի բնակիչներից աղբահանության համար մատուցված ծառայությունների դիմաց մեկ շնչի հաշվով ամսեկան վճար սահմանել 70/ յոթանասուն/ ՀՀ դրամ:
5. Համայնքի տարածքից աղբի հավաքման, փոխադրման տեղադրման տեսակավորման, վնասագերծման և պահման, ինչպես նաև աղբ տեղափոխող մեքենա-մեխանիզմների աշխատանքները համակարգվում է Ա/Ձ Լևոն Օհանյանի կողմից:
6. Համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տարածք չկա:
7. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ 2020 թվականի համար 1700000 ՀՀ դրամ:
8. Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում, 2020 թվականի համար նախատեսված է հավաքագրել աղբահանության վճար 1867100 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

«29» հունվարի 2020թվական

N 04

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան(Վաղ.) համայնքի 2020 թվականի տարեկան աշխատային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝

	կողմ՝9	դեմ՝0	ծեռնպահ՝0
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----



Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հունվարի «29»
Բաղրամյան (Վաղ.) համայնք

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ(ՎԱՂԱՐՇԱՊԱՏ) ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2020 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Գոռ Միրզոյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 01 նիստի N 04 որոշմամբ

ԲԱՂՐԱՄՅԱՆ 2019թ.

Բովանդակություն

<i>Ներածություն.....</i>	13
1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները	14
2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների).....	19
3. Համայնքային գույքի կառավարման 2019թ. ծրագիրը	10
4. Համայնքի SUՊ-ի ֆինանսավորման պլանը.....	32
5. Համայնքի SUՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը	34

1. Ներածություն

SUՊ-ը՝ դա այն փաստաթուղթն է (շարժիչ ուժը), որը համախմբում է տվյալ համայնքում առկա մարդկային, ֆինանսական, վարչական, մշակութային և սոցիալական ռեսուրսները և տվյալ տարվա համար ուղղորդում այդ արժեքների բնականոն առաջընթացին, այսինքն՝ առկա պոտենցիալի ճիշտ կազմակերպման և վերաբաշխման արդյունքում այն նպաստելու է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Բաղրամյան(Վաղ.) համայնքի SUՊ-ը մշակվել է համայնքի ՏԻՄ-երի , գործարարների, ներդրողների, բարերարների և ավագանու 2020թվականի անելիքները համակարգելու նպատակով: Բաղրամյան(Վաղ.) համայնքի SUՊ-ի հիմնական նպատակներն են.

- համակարգելու ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և կանոնակարգելու ՏԻՄ-ի աշխատանքները ,
- համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- ՀՀԶԾ-ի շրջանակներում հստակեցնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և ժամկետեր սահմանել դրանց իրականացման համար,
- համայնքը դարձնել ներդրողների, գործարար աշխարհի և զբոսաշրջության համար ավելի գրավիչ:

Բաղրամյան(Վաղ.) համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

- 1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2020 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Բաղրամյան(Վաղ.) համայնքը բարեկարգ, էկոլոգիապես մաքուր, ներդրողների համար գրավիչ, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար բավարար պայմաններ ունեցող համայնք է, որտեղ կան բնակչության կենսագործունեության և երեխաների ժամանցի համար անհրաժեշտ բավարար ենթակառուցվածքներ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	9.4	8
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	21	25
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	2907	3034

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	80	88

	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	16	19
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	21	25
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
	2020 թվականի ընթացքում պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
	2020 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	70	78
	Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին	մասամբ	մասամբ
	Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը միջբնակավայրային ճանապարհների վիճակից, %	60	75

Ոլորտ 5. Հողօգտագործում			
Բարելավել համայնքի տարածքում առկա հողերի չափազրման համակարգը և բարձրացնել հողօգտագործման արդյունավետության մակարդակը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը հողօգտագործման ոլորտում մատուցվող ծառայություններից, %	60	65
	Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, %	25	35
	Զափագրման հետ կապված անճշտությունների մակարդակը, %	10	5
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը, ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը:	Ընթացիկ նորոգված ներբնակավայրային ճանապարհների երկարությունը, կմ	3	8
	Բարեկարգ ներբնակավայրային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	19	24
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2020 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			
Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը:	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	6	10
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	30	78
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	30	75
	Արտադպրոցական	30	35

	դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %		
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակութի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	30	45
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	18	25
Ոլորտ 10. Առողջապահություն			
2019 թվականի ընթացքում առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Համայնքում սպորտի զարգացման համար ստեղծել նախադրյալներ:	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և խաղահրապարակներով, %	75	80
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից, %	60	68
	Համայնքում սպորտային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	20	27
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Թեթևացնել համայնքում բնակվող անապահով ընտանիքների հոգսերը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	45	52
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			

Ստեղծել անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմաններ:	Անասնապահության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %	2	5
	Ֆերմերների գիտելիքների, հմտությունների և ունակությունների բարձրացում, %	2	5
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
2020 թվականի ընթացքում անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ:	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), %-ով	20	400
	Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, %	90	95
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2020 թվականի ընթացքում զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2020 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Համայնք
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում	700.0	Բաղրամյան(Վաղ.)
Ընդամենը		700.0	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	2020 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	2020 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Բաղրամյան(Վաղ.) համայնքի միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում	3000.0	Բաղրամյան-Այգեկ, Բաղրամյան-Նորակերտ, միջհամայնքային
2.	Համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգում	28000.0	Բաղրամյան, պետություն
3.	Բաղրամյան համայնքի լուսավորության համակարգերի անցկացում և առկա համակարգի պահպանություն	300.0	Բաղրամյան
4.	Բաղրամյան համայնքի ներհամայնքային ոռոգման ցանցի աշխատանքների իրականացում	1000.0	Բաղրամյան
5.	Համայնքի զբոսայգու բարեկարգման աշխատանքներ	700.0	Բաղրամյան
6.	Բաղրամյան համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում	23700.0	Բաղրամյան, պետություն, մասնավոր
Ընդամենը		56700.0	
Ոլորտ 5. Հողօգտագործում			
1.	2020 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	0	
2.			
Ընդամենը		0	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			

1.	Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցում	0	Բաղրամյան
Ընդամենը		0	-
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2020 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:		-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում և աջակցություն կրթական ծառայությունների կազմակերպմանը	2000.0	Բաղրամյան
2.	Բաղրամյան բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	0	Բաղրամյան
Ընդամենը		2000.0	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում	1910.0	Բաղրամյան
Ընդամենը		1910.0	
Ոլորտ 10. Առողջապահություն			
2019 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:		-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Բաղրամյան համայնքի բնակավայրերում ֆուտբոլային խաղադաշտերի վերանորոգման աշխատանքների իրականացում :	0	Բաղրամյան
Ընդամենը		0	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	3000.0	Բաղրամյան
Ընդամենը		3000.0	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
1.	Գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում (անասնաբուժ)	600.0	Բաղրամյան
Ընդամենը		600.0	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
1.	2019 թվականին անասնաբուծության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	1700.0	Բաղրամյան
Ընդամենը		1700.0	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
1.	2019 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-

Ընդամենը		-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
1.	2020 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ընդհանուրը		66610.0	-

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Համայնք
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Բաղրամյան համայնքի բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների իրականացում	40000.0	Բաղրամյան
Ընդամենը		40000.0	
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Համայնքում մարզահրապարակների հիմնում	5000.0	Բաղրամյան
Ընդամենը		5000.0	-
Ընդհանուրը		45000.0	-

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտի նպատակ. Ապահովել տեղական ինքնակառավարումը Բաղրամյան(Վաղ.) համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարման համակարգ	Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն 80%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում					
Ծրագրի նպատակ. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում	ՏԻՄ-ի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը 75%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	-
Միջոցառումներ. 1. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում 2. Մասնագիտական և այլ ծառայությունների ձեռք բերում	Ելքի ցուցանիշներ •Ծրագրային թարմացումներ -3 •Հարկերի հաշվառման և հաշվարկման արդյունավետության	Բաղրամյանի համայնքապետարան	Համայնքի ղեկավար		

	<p>մակարդակի բարձրացում- 10 %</p> <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Համակարգիչների թիվը-6 •Աշխատակիցների թիվը-12 •Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը` 264.0 հազ. դրամ, համայնքի բյուջե 				
Ծրագիր 2. Համայնքի աշխատակազմի պահպանում					
Ծրագրի նպատակ. Օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացում համայնքում	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 70%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	-
<p>Միջոցառումներ.</p> <p>1.Բաղրամյան համայնքի վարչական ղեկավարի պահպանում</p> <p>2.Բաղրամյան համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերի</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Ավագանու նիստերի թիվը -8 •Վերապատրաստված աշխատակիցների թիվը - 4 •Բնակավայրերի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունն ավելացել է 8%-ով <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Աշխատակիցների թիվը -12 •Համայնքում աշխ. պահպանման ծախսեր – 34735.0հազ. դրամ 	Բաղրամյանի համայնքապետարան			

Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ոլորտի նպատակներ.

- Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը
- պահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը
- տեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ
- Ապահովել համայնքի քաղաքաշինական զարգացման նորմերը

- Բարելավված համայնքային գույքի, ենթակառուցվածքների, հանրային վայրերի տեսակարար կշիռը **40%**
- Մանիտարահիգիենիկ ու էկոլոգիական բարվոք պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, **60%**
- Հանրային տարածքների մաքրության աստիճանը ընդհանուր հանրային տարածքների մեջ, **80%**
- Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը-բացակայում է

Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ

Համայնքի ղեկավարի տեղակալ

1 տարի

-

Ծրագիր 1. Բաղրամյան համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծի մշակում

<p>Ծրագրի նպատակ. Բաղրամյան համայնքում քաղաքաշինական նորմերի ապահովում</p>	<p>Բաղրամյան համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը, բացակայում է</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ. 1. Բաղրամյան համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծի պատվիրում և ձեռք բերում</p>	<p>Ելքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> •Քաղաքաշինական ծրագրերի իրականացման հնարավորություն – առկա է •Քաղաքաշինության ոլորտում սպասարկման արագության և օպերատիվության աճ -20% •Գլխավոր հատակագիծ – բացակայում է <p>Մուտքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> •Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 2 •Համայնքի ընդհանուր մակերեսը- 107հա </p> </p>	<p>Բաղրամյանի համայնքապետարան</p>			
<p>Ծրագիր 2. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Համայնքային ենթակառուցվածքների զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> •Բարելավված պայմաններ համայնքի աշխատակազմի և բնակիչների սպասարկման համար – առկա է •Խմելու ջրի բնականոն մատակարարման ապահովում – 24 ժամ •Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ 	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>

	երթնեկության անվտանգության աճ - 100%				
Միջոցառումներ. 1. Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում 2. Ջրամատակարարման համակարգի սպասարկում	Ելքի ցուցանիշներ •Վերանորոգված վարչական շենքերի թիվը- 1 •Վերանորոգվող ցանցերի ընդհանուր երկարությունը-1.3 կմ •Լուսավորվող փողոցների թիվը - 17 •Սպասարկվող խմելու ջրի ցանցերի քանակը-1 Մուտքի ցուցանիշներ •Մրցույթների հայտարարություններ- 0 •Կապալատուների հետ պայմանագրեր -6	Բաղրամյանի համայնքապետարա ն			
Ծրագիր 3. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ. Մաքուր համայնք բնակիչների համար	Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական բարվոք պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում 80%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-

<p>Միջոցառումներ. 1. Աղբահանության ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում՝ աղբահանություն և սանիտարական մաքրում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը -2127 •Աղբահանության ծառայության որակի բարելավում- 15% •Շաբաթօրյակների թիվը տարեկան կտրվածքով 3 անգամ <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 12 •Տեխնիկական միջոցներ - 3 	<p>Կազմակերպություն ԱԶ Աղասի Թորոսյան</p>			
<p>Ոլորտ 3. Կրթություն</p>					
<p>Ոլորտի նպատակ. Կազմակերպել նախադպրոցական կրթության որակյալ ծառայություններ</p>	<p>Նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքում 20%</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում</p>	<p>Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքում</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Կազմակերպություն</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</p>					

<p>Ոլորտի նպատակ. Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, աջակցել մշակութային նախաձեռնությունների իրականացմանը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը</p>	<p>Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների ակտիվ մասնակցություն, 40 %</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը</p>	<p>Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից, 30%</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Մշակույթի ոլորտի կազմակերպիչ</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ 1. Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը</p>	<p>Ելքի ցուցանիշներ •Մշակութային միջոցառումների թիվը – 3 Մուտքի ցուցանիշներ •Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը - 7</p>	<p>Բաղրամյանի համայնքապետարան</p>			
<p>Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն</p>					
<p>Ոլորտի նպատակ. Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը</p>	<p>Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր</p>	<p>Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>

	ընտանիքների մեջ 70%	արդյունքներ			
Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին					
Ծրագրի նպատակ. Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը	Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում, 6%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-
Միջոցառումներ 1. Դրամական օգնություն	Ելքի ցուցանիշներ •Համայնքի սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ /ընտանիքներ/ -70 Մուտքի ցուցանիշներ •Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե	Բաղրամյանի համայնքապետարան			
Ոլորտ 6. Գյուղատնտեսություն					
Ոլորտի նպատակ. Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Մշակվող հողատարածքների տեսակարար կշիռը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի մեջ, 25%	Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-

Ծրագիր 1. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում

<p>Ծրագրի նպատակ. Ընդլայնել համայնքի գյուղատնտեսական նշանակության մշակվող հողատարածքները</p>	<p>Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը համայնքում 20%</p>	<p>Հաշվետվություն, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>		<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ 1. Գյուղատնտեսական աշխատանքների իրականացում</p>	<p>Ելքի ցուցանիշներ •Համայնքում հողագործության զարգացում և աշխատանքների արդյունավետության բարելավում- 10% Մուտքի ցուցանիշներ •Հողագործությամբ զբաղվող տնտեսությունների քանակը – 120 •Գյուղատնտեսական մեխանիզացիա /միավոր/- 4</p>				
<p>Ընդամենը</p>	<p>37999.0</p>				

3. Համայնքային գույքի կառավարման 2020թ. ծրագիրը

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն կամ ընկերություն	Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ ²)	Վիճակի գնահատումը	Գույքի կառավարման նշանակությունը	Այլ նշանակություն
1						
2	Բնակելի շենքեր	Բաղրամյան	50280.0	Բավ.	անհատույց սեփականաշնորհում	
3	Բազմաբնակարան շենքեր	Բաղրամյան	2720.0	Բավ.	անհատույց սեփականաշնորհում	
4	Համայնքապետարանի վարչական շենքի տարածք	Բաղրամյան	268	լավ	Անհատույց օգտագործման	
5	Վարելահող	Բաղրամյան	532.0(հա)		Սեփականաշնորհում	
7	Բազմաբնակ տնկիներ	Բաղրամյան	57(հա)		Սեփականաշնորհում	
8	Այլ հողատեսքեր	Բաղրամյան	300(հա)		Սեփականաշնորհում	

4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը

Աղյուսակ 6. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները				
			Համայնքի բյուջե	Պետական բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Համայնք-ՔՀՄՀ համագործակցություն	Այլ աղբյուրներ
Ոլորտ 1. Ընդհանուր							
1	Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում	14178,8	14178.8				
2	Համայնքի աշխատակազմի պահպանում	34735.0	34735.0				
	Ընդամենը	48913.8	48913.8				
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն							
3	Քաղաքաշինական գլխավոր հատակագծի մշակում	0	0				
4	Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում	0	0				
5	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	1700.0	1700.0				

	Ընդամենը	1700.0	1700.0				
Ոլորտ 3. Կրթություն							
6	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում	13000.0	13000.0				
	Ընդամենը	13000.0	13000.0				
Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ							
7	Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում	1910.0	1910.0				
	Ընդամենը	1910.0	1910.0				
Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն							
8	Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին	3000.0	3000.0				
	Ընդամենը	3000.0	3000.0				
Ոլորտ 6. Գյուղատնտեսություն							
9	Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	600.0	600.0				
	Ընդամենը	600.0	600.0				
Ընդհանուրը		69123.8	69123.8				

5. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Աղյուսակ 7. Համայնքի 2020թ. ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը	12			
Ելքային (քանակական)	Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, %	10			
Ելքային (որակական)	ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, %	0			
Ելքային (ժամկետայնության)	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	3			
Վերջնական արդյունքի	Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			

Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ծրագիր 1. Փողոցային լուսավորության իրականացում

Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքապետարանի ց` փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը	2			
Ելքային (քանակական)	Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, կմ	16			
Ելքային (որակական)	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %	99			
Ելքային (ժամկետայնության)	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով` ձմռանը, ժամ	7			
	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով` ամռանը, ժամ	4			
Վերջնական արդյունքի	Բաղրամյան համայնքի փողոցների անվտանգությունը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար, շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			

Ոլորտ 3. Տրանսպորտ					
Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն					
Արդյունքային ցուցանիշները		2012 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը	0			
Ելքային (քանակական)	Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	30			
Ելքային (որակական)	Համայնքի բնակիչների կարծիքը իրականացվող ծրագրի վերաբերյալ,	լավ			
Վերջնական արդյունքի	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների սպասարկման, ծառայությունների մատուցման որակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	բավարար			

Ոլորտ 4. Կրթություն					
Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	«Բաղրամյան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	1			

Ոլորտ 5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Ծրագիր 1. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավում					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Գրքային ֆոնդի ծավալը, կտոր գիրք	8750			
Ելքային (քանակական)	Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերի թիվը	0			
Վերջնական արդյունքի	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին՝ այո, ոչ	այո			

Ոլորտ 6. Սոցիալական պաշտպանություն					
Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Ելքային (քանակական)	Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	50			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը իրականացվող ծրագրի վերաբերյալ	դրական			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Սոցիալապես անապահով ընտանիքներին	լավ			

	տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության մակարդակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց				
Ծախսեր, հազ. դրամ	3000.0	3000.0			

Ոլորտ 7. Շրջակա միջավայրի պահպանություն					
Ծրագիր 1. Համայնքի տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման աշխատանքների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Աղբամանների թիվը	42			
Ելքային (քանակական)	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսը, քմ	6000			
Ելքային (որակական)	Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանություն ծառայությունից, %	80			
Ելքային (ժամկետայնության)	Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), օր	1			
Վերջնական արդյունքի	Համայնքի բնակիչների կարծիքը մատուցվող աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման ծառայությունների վերաբերյալ, շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			
Ծախսեր, հազ. դրամ	1700.0	1700.0			



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

<<29>> հունվար 2020թվական

ԹԻՎ 05-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ՎԱՂ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
